

**ԽՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՊԵՐՃԱՇՈՒՔ  
ՏՈՂԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻՁԻ ՄԵԶ**

«Արեմուտք»-ը հաղորդում է.—

Փարիզի ամենեն շքեղ սրահներեն թակ առ Շայենի մեջ, բազմահազար ժողովով ներկայությամբ տոնվեցած Խորհրդային Հայաստանի 26-րդ տարեդարձը:

Անհուն հրճվանքով պետք է արձանագրել ժողովրդական լայն և միահամուռ մասնակցությունը:

Թեմին ճակատը կերևային երկու վերտառություններ.— «Վեցցե՞ հաղորդապետ Ս. Ս. Ռ. Միուրյունը» և «Հայ ժողովությունը իր պատմական հայրենիքը կապանեց»:

Թեմին վրա բազմած էին Խորհրդային Միուրյան գեսպան Ն. Վ. Պոկոմոլով, Արտավազդ Արքեպահսկոպով՝ լիազոր պատվիրակ Ներովայի թեմին, օրվան նախապահ Մեթր Մարմարյան, զանազան միությանց ներկայացուցիչներ, որոնք մաս կկազմեն օրվա նախագահության:

Մեթր Մարմարյանի բացման և շնորհակալության խոսքերն հետո առաջին խոսքը տրվեցավ Ն. Վ. Պոկոմոլովին, որ առավել փեղեցիկ ճառ մը արտասանեց, շնորհավորով՝ Հայաստանի Խորհրդայնացման 26-րդ տարեդարձը և մասնակորապես շեշտեց Խորհրդային Միուրյան մեջ փոքր ազ-

գերո վայելած բարիքներն ու ինքնօրենությունը:

Ապա խոսք առավ Պ. Մեսրոպ Ասատորյան և խոսեցավ մասնավորապես մեր հայունիքի տնտեսական, մշակութային վերելքի մասին:

Կաթողիկոսական պատվիրակ Արտավազդ Արքեպահսկոպով շատ գեղեցիկ և իմաստալից խոսքերով շնորհավորելով օրվան առնը, մասնավորապես ծանրացավ Հայ Եկեղեցի կատարած դերին, տարիներ շարունակ, և նաև վերջին պատերազմի ընթացքին:

Պ. Հինայիկլան և պրոֆ. Մանուկյան, առաջին հայերն, երկրորդ Գրանսերն նույնպես շետեցին օրվան առնին կարևորությունը, և խանդավան խոսքերով կուռղեցին Հանդիսականներուն համախմբը մի մեր հայրենիքին շուրջ:

Ամենեն վերը ցուցադրվեցավ «Հայրենի երկիր շարժանկարը» Գեղեցիկ գործ մը, պատկերացում մը Հայոց պատմության, իր այս գծերուն մեջ, Հայրենազումը ու ովոնքից: Ընդհանուր առավորությունը ովերից է ու կառուի բոլորին ալ սրտին: Այդ տպավորությամբ ալ արդեն Հանդիսականները բաժնվեցան սրահներ:

**ԼԵՎՈՆ Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ  
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՍԱԳՈՒՄԱՐԻՆ**

Միենիլի գրական ընկերեց և հայրենակիցներ

Արտասահմանի Հայ գրողի մը համար Հայաստանի Սովետական Գրողներու Միուրյան կողմէ Երևանի մեջ տեղի ունեցող իր Համագումարին մասնակցելու հրավիր մը մեծ պատիվ մըն է և ես խոնահարար շնորհակալ եմ Ձեզի, որ զիս արժանի նկատեցիք այդ պատիվին: Խորապես հովալեցա, երբ ստացա Ձեր հեռագիրը: Հուսացի գալ, բայց չեմ կրնար, հակառակ բոլոր շանքերու և բաղձանքիս: Դյուրին չէ ներկա ժամանակներուն ճամբորդել Կալիֆորնիային Հայաստան: Ես ուս կցավիմ, որ պիտի չկըրն Ձեզի հետ ըլլալ Հայաստանի Սովետական Գրողներու: և իրենց հուրիբուն այս պատմական Համագումարին առթիվ, և ի՞մ աչքերով տեսնելու Հայաստանի առաջդիմության սքանչելի և խանդավառիչ տեսարանը, և մեր ժողովորդին կուտուրական

և գրական վերածնուզը Ձեր առաջնորդության տակ,

Կցալիմ նաև որ պիտի կը բնամ բաժակ մը Հայկական գինի բարձրացնել և Զեղի հնտ խմել Սովետ Միուրյան անդամ եղող Հայաստանի բույր Հանրապետությանց կենացը, և մանավանդ անոնց բույրի մալրն Հանդիսացող Ռուսաստանի կենացը: Ռուս փառապահն ժողովուրին Հանդիսաց, որոն գրական ներկայացուցիչները կմասնակցին կարծիք Ձեր Համագումարին, բոլոր Հայերու պիս ես ալ ունիմ սիրո, զմայլանքի և երախտագիտության զգացումներ: Խնձան հազարավոր Հայ որք տղաք, ես ալ իմ կյանքին կպարտիմ Ռուս Բանակին: Հարյուր հազարավոր Հայ մասնակներ, որոնք ինձի հետ քշիցան մասուն հանապարհին մըրա, զարդարեցան թուրքերու մտրակներու, սուրերու և կա-

յիններու տակ իրենց սրտերուն մեջ պահեն-  
լով «Թեղի Ռուս»ին հմայական պատկերը  
Ուր՝ պիտի ըլլայինք մենք հայերս այսօր  
առանց Ռուսաստանի և Սովետական Սո-  
ցիալիստական Հանրապետությանց Միու-

ները, և սատարի Սովետական ազգային  
քաղաքականության Հառաջացման, որուն ա-  
մեննեն հույսի և խրախուսիչ արդյունքները  
կտևնուին Հայաստանի մեջ:

Որպես ամերիկացի և հայ գրող ես կշա-  
նամ կատարել իմ պարտականությունը Ամե-  
րիկան Սովետ Բարեկամության զարգացման  
և ֆաշիզմի դեռ գոյություն ունեցող թուլնե-  
րու փրկնական պատաժաման գործին մեջ:  
Հանրածանոթ ամերիկացի Պոթակից և պա-  
տիոյի վերուժող մը, որ կատարավի Հայա-  
ստանի սահմաններու ընդարձակումը մինչև  
Ուկրաինան Գիծը, բայց երբեմն կֆնադա-  
տե Սովետական քաղաքականությունը, վեր-  
շերս ինձի ըսավ. —

Ժմ կամքիքով Միացյալ Նահանգներու  
և Սովետ Միության միջև ավելի լավ հաս-  
կացողություն մը հաստատելու ամեննեն հա-  
վանական միջոցը Հայկական հարցի պատ-  
շաճ լուծումը լավագույն եղանակն է Սովե-  
տական Սոցիալիստական Հանրապետու-  
թյուններու Միության և Միացյալ Նահան-  
գայ միջև:

«Սովետական Ռուսաստանն ըրած է հա-  
յերու համար շատ բաներ, զորս Ամերիկան  
պետք էր ըներ, բայց ըսրավու:

Հայաստանի հանդեպ կա ավենդական  
համակրանք մը Ամերիկայն ժողովրդական  
լայն խավերու մեջ, որոնք առատաձեռն և  
արդարաւեր են և անկեղծորեն կը-  
հավատան ազգերու ազատության և  
եղբայրակցության: Վստա՞ եմ որ  
Հայաստան երբեք չպիտի մոռանա այն ա-  
ռատաձեռն և սրտարուի օգնությունը, զորս  
ան ստացավ Ամերիկայն ժողովրդին համաշ-  
խարհային Առաջին Պատերազմին հաջոր-  
դող սարսահիմ օրերուն: Հայկական ծնունդ  
կամ ծագում ունեցող Ամերիկյան քաղաքա-  
ցիներ կընան լուարանել Ամերիկյան հա-  
նցրային կարծիքը Հայկական կատի արծա-  
նիքներու մասին, այդ է սրբազան հայ հո-  
գերու վերադարձ իրենց օրինական տի-  
րոջ, Հայկական Սովետական Սոցիալիստա-  
կան Հանրապետության, և մեր ցրված տա-  
րավիր ժողովրդի վերադարձ դեպի իր հին  
հայրենիքը:

Որպես Ամերիկացի և հայ գրող ես կուզմ  
Զեղի իմ շնորհակալությունս և հիացումս  
հայտնել այն հաղթանակներուն համար,  
զորս Դուք տարած եք տպիտության և շարին  
դիմքական-կուտուրական և սփազմական  
ճակատներուն վրա, սովորաբ և արյունող  
Հայաստանը 25 տարվան մեջ փոխելով  
նվազական ամենին պայծառ անկյունի  
մը, որ գրականության և դիտության, ազ-



I. Զ. Սյուրմելյան

թյան օգնության և պաշտպանության: Եվ  
ուր պիտի ըլլար նաև հիմա՝ աշխարհի մը-  
նացյալ մասը: Հայաստանը Սովետ Միու-  
թյան հարավային սահմանին վրա կուտու-  
րական և ֆիզիկական հոմելու բերդ մըն է,  
և հայեր ամենուրեք անձկագին կհուսան, որ  
այդ բերդին սահմանները պիտի ընդար-  
ձակվին և պարունակեն իրենց մեջ պատմա-  
կան հայ հողեր, որոնք ամայի կմնան ֆա-  
շտական թուրքի գերիշխանության սակի:

Զեր Համագումարը տեղի կունենա հայ  
պատմության այս երշանիկ և նշանակալից  
ժամանք, թեև, դժբախտաբար, մուռ ամերի-  
կան միջազգային հորիզոննեն վրա: Մայր  
Հայաստանը արձակած է ներգաղթի հրա-  
վերը և իր շուրջ հՀավաքի աքսորական զա-  
վակներն ու դուստրերը: Զեր Համագումարը  
պիտի մոտիկ պիտի բերե Հայրենիքի ժո-  
ղովուրդը և ուրիշ երկիրներու հայ համայթ-

գերու ազատության, հավասարության և եղայրակցության դրոշները բարձրորն կծածնին։ Հայաստանի հնագույն և նորագույն կուտուրական աշտարակները՝ Ամերիկայի մեջ սրբ կլեցնեն հապարտությամբ և հրճանակով։

Հայաստանի իմ այցելություն 25 տարիներ հնարինի համար պիտի ըլլար հիշատակելի ճամբորգություն մը, և ես գիտեմ, որ Զեզմեն շատ բան պիտի սորվի։ Զեզ հանդիպել և Զեզ անձնապես ճանչնալը

ինձի համար հազվագյուտ բերկրանք մը և առանձնաշնորհ մը պիտի ըլլար։ Թեև Զեզմեն բաժնված եմ հազարավոր մղոններով, ոգիով Զեզի հետ եմ, և ուղարկելով Զեզի իմ սրտագին ողջուկներս և լավագույն բաղդանքներս, կհուամ, որ զիս նորն պիտի հրամիրեք, Զեր երրորդ համարին։

Լևոն Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ  
Հոլիվուա, Կայիփորենիա  
(«Փողովուրդի ծայե» թիվ 1272)

## ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆԻ ՄԱՀԸ

«Արևմուտք»-ը հաղորդում է.—

Մարտի 18-ին մեռավ անուանի արտեստագետ Հահին։ Հուզարկավորությունը կատարվեցավ 21 մարտի, ուրբաթ օրը, Հայոց եկեղեցիին մեջ։ Դժբախտաբար մահը և հուզարկավորությունը ուշ ծանուցուած ըլլալով, շատեր չկրցան հարգանքի իրենց վերջին տուրքը հատուցանել մեծ արթաստագետին։

Մնած էր 1874-ին Պոլիս։ Երկրորդական ուսումն առաջ էր Վենետիկի Միջիարյաններուն մոտ ժամանակ մը Վենետիկ իտալացի նկարչի մը ձեռքին առակ աշխատելի ետք Փարիզ անցավ և հոն աշակերտեցավ Ժան-Փոլ Լորանսի և Պենժմանն Գոնսամանի։ Հետո ինքզինքը տուավ գծագրության, կիրարիկով Օֆարտ, Թունարսի և Կոնն, անշուռով զնահատուցավ և պատկերազարդեց օրիվն ամեննեն նշանավոր գրագետներուն գործերը։ Հիշենք Լի Ֆետ Ֆուներ, Պառիսի, Անաթոլ Ֆրանսի, Գուլբի, Կոնդուրներուն և այլն գործերը։ Իր ժաման բազմաթիվ գնահատական ուսումնասիրություններ հրատարակած են ֆրանսացի, իտալացի և անգլիացի արտեստի բննագատներ։

Հահին, ի մեջ այլոց, մեծ դիմանկարիչ մըն էր։

Դամբանականներ խոսեցան Արտավագդ Արքեպիսկոպոս և ուրիշներ։

Դեռ ևս 1936 թվին ՀՍՍՌ Կերպարվելստի Պետական Թանգարանը կազմակերպել էր եղագար Շահինից սացգած օֆորտների ցուցանդուիր, որը մեծ հետաքրքրություն էր առաջ բերել Երևանի արվեստական հասարակայնության մեջ։



*Էտկար Շահին*

Ելուսպայի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Արտավագդ Արքեպիսկոպոսի վրա պարտականություն է ընկենում, Փարիզի հայ հասարակական կազմակերպությունների օգնությամբ, հավաքին անվանի արվեստագևությանը Շահինի գործերը և կինոտրոնացները դրանք մեր ծաղկող Հայոցներում։ Սովորական Հայաստանում։

ԽՄԲԱՀԴ. Ք.